ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԿՄՀՔԹԻՎՀՆՈՒՀ-ԳՀԱՇՁԲ-24/01»

ք. Հրազդան «26» մարտ 2024թ.

Հրազդանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Ս.Միքայելյանի, որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Դավարտ» ՍՊԸ ն, ի դեմս տնօրեն Ա.Գրիգորյանի, որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «**Հրազդանի թիվ 2 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի գազաֆիկացման համակարգի կառուցման աշխատանքների**» կատարման ծառայությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2Ա. **Պատվիրատուի (Գնորդի) իրավունքների ու պարտականությունների իրականացումը վերապահվում է «Հրազդանի թիվ 2 ՆՈՒՀ » համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2

կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին, բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքումթերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ նախագծողը՝

1) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմում է Գնումների մասին օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնում է կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնում է աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնում է հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման

ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

3.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված հանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **1 106 580 մեկ միլիոն հարյուր վեց հազար հինգ հարյուր ութսուն/** /ինը հարյուր քսաներկու հազար հարյուր հիսուն/ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ

սահմանված այլ վճարները: Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:
5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:
5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:
5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:
5.4.1 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝
ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,
բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:
5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:
5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3

(երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի

առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հրազդանի համայնքապետարան
ք.Հրազդան, Սահմանադրության
հրապարակ 1, վարչական շենք
Հրազդանի ՏԳԲ
ՀՎՀՀ 03027114
ՀՀ 900122001663
Համայնքի ղեկավար՝

----------Ս.Միքայելյան

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Դավարտ» ՍՊԸ
Գ.Գետարգել, Ս.Ալեքսանյան փ,6տ
Ակբա Բանկ ՓԲԸ
ՀՀ 220493332054000
ՀՎՀՀ 03542969

Տնօրեն՝ Ա.Գրիգորյան

ՍՏԱՑՈՂ

«Հրազդանի թիվ 2 ՆՈՒՀ» ՀՈԱԿ
Հասցե ք.Հրազդան Բանավան թաղամաս
Դուրյան 26
«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ
ՀՀ 163158017067
ՀՎՀՀ 03007849

Տնօրենի ժ/պ՝ ----------Ս.Արշակյան

Հավելված N 1
«26» 03 2024թ. Կնքված
«ԿՄՀԲԹԻԿՀՇՆՈՒՀ-ԳՀԱՇՁԲ-24/01»
ծածկագրով պայմանագրի

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավորը	Քանակը	Միավորի արժեքը	Միավորի արժեքը (հազ. դրամ)	Ընդամենը (հազ. դրամ)	
1	2	3	4	5	6	7	
	1-1. Գազամատակարարում						
1	Հենարանների համար փոսերի փորում ձեռքով IV կարգի գրունտում	$մ^3$	1,9	5,00	9,50		
2	Ավազի շերտ 10սմ	$մ^3$	0,20	4,00	0,80		
3	Բետոնե հիմքերի կառուցում B12,5 դասի բետոնով	$մ^3$	3,60	31,00	111,60		
4	Հենարանների կառուցում մետաղական խողովակից Φ89x4.0 H=5մ L=12մ Φ57x3.0 H=2.2մ L=46մ	կգ	284,6	0,70	199,19		
5	Պողպատե գազատար խողովակ պնեվմատիկ փորձարկումով Φ89x4 մոնտաժումով	մ	9,0	4,30	38,70		
6	Պողպատե գազատար խողովակ պնեվմատիկ փորձարկումով Φ25x3,2	մ	105,0	3,10	325,50		
7	Կիսախողովակների տեղադրում գազատարի տակ	կգ	3,8	0,50	1,90		
8	Պարոնիտ	կգ	3,8	5,00	19,00		
9	Մետաղական կոնս. (հենասյան համար)	կգ	15,2	1,20	18,24		
10	Արմունկ Φ25x5 90աստ.	հատ	10	1,50	15,00		
11	Անցում d89x5.0/ 40x5.0	հատ	2	5,00	10,00		
12	Անցում d40x5.0/ 25x5.0	հատ	2	3,00	6,00		
13	Պատին ամրացում	կգ	16,0	1,00	16,00		
14	Գազատարի և հենասյունների ներկում 2 անգամ, գրունտ ГФ-021 յուղաներկ	$մ^2$	24,0	1,00	24,00		
15	Ամրան Φ12AIII	կգ	15,2	1,00	15,20		
16	Գազահաշվիչ G-4(6մ3/ժամ)	հատ	1	27,00	27,00		
17	Գնդիկավոր փական Φ25	հատ	1	5,00	5,00		
18	Խողովակների փչամաքրում	կմ	0,114	100,00	11,40		
19	Փական Φ25	հատ	1	5,50	5,50		
	Ապահովիչ կափույր d=20	հատ	1	8,00	8,00		
21	Գազի արտահոսքի ազդանշանային սարք	հատ	1	30,00	30,00		
22	Մետաղական խողովակից պատյան Φ32*3 (1 հատ)	մ	1,0	1,00	1,00		
23	Միացում գործող Φ57մմ մ/ճ գազատարին	տեղ	1	3,00	3,00		
24	Օդափոխության արտածման ճաղաշար 200x200	հատ	2	3,00	6,00		
25	Օդատար ցինկապատ թիթեղից δ=0,5մմ Φ200 L=1.0մ ամրակապումով	$մ^2$	0,6	6,00	3,77		
26	Անցքերի բացում պատերում Φ200	1 անցք	2	2,50	5,00		
27	Անցքերի փակում B15 դասի բետոնով	$մ^3$	0,02	260,00	5,85		
	Ամբողջը 1-1 մասի				*922,150*		100,00
	Ամբողջը 100%				*922,150*		100,00 %
	ԱԱՀ - 20 %				*184,430*		
	Ամբողջը				*1106,580*		

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հրազդանի համայնքապետարան
ք.Հրազդան, Սահմանադրության
հրապարակ 1, վարչական շենք
Հրազդանի ՏԳԲ
ՀՎՀՀ 03027114
ՀՀ 900122001663
Համյանքի ղեկավար՝

----------Ս.Միքայելյան

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Դավարտ» ՍՊԸ
Գ.Գետարգել, Ս.Ալեքսանյան փ,6տ
Ակբա Բանկ ՓԲԸ
ՀՀ 220493332054000
ՀՎՀՀ 03542969

Տնօրեն _____ Ս.Գրիգորյան

ՍՏԱՑՈՂ

«Հրազդանի թիվ 2 ՍՈՒՀ» ՀՈԱԿ

Հասցե ք.Հրազդան Բանավան թաղամաս

Դուրյան 26

«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ

ՀՀ 163158017067

ՀՎՀՀ 03007849

Տնօրենի ժ/պ՝ _____Ս.Արշակյան

Հավելված թիվ 2
«26» 03 2024 թ. կնքված
«ԿՄՀՔԹԻՎՀՆՈՒՀ-ԳՀԱՇՁԲ-24/01» ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

N o	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	«Կոտայքի մարզի Հրազդան համայնքի թիվ 2 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի գազաֆիկացման համակարգի կառուցման աշխատանքներ»	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու հաջորդող աշխատանքային օրը	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 40 օրացուցային օրում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հրազդանի համայնքապետարան
ք.Հրազդան, Սահմանադրության
հրապարակ 1, վարչական շենք
Հրազդանի ՏԳԲ
ՀՎՀՀ 03027114
ՀՀ 900122001663
Համայնքի ղեկավար՝

----------Ս.Միքայելյան

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Դավարտ» ՍՊԸ
Գ.Գետարգել, Ս.Ալեքսանյան փ,6տ
Ակբա Բանկ ՓԲԸ
ՀՀ 220493332054000
ՀՎՀՀ 03542969

Տնօրեն՝ Ա.Գրիգորյան

ՍՏԱՑՈՂ
«Հրազդանի թիվ 2 ՆՈՒՀ ՀՈԱԿ
Հասցե ք.Հրազդան Բանավան թաղամաս
Դուրյան 26
«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ
ՀՀ 163158017067
ՀՎՀՀ 03007849
Տնօրենի ժ/պ՝ ——————————Ս.Արշակյան

Հավելված N 3
«26» 03 2024 թ. կնքված
«ԿՄՀԲԹԻՎ2ՆՈՒՀ-ԳՀԱՇՁԲ-24/01» ծածկագրով պայմանագրի

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	76111200	««Կոտայքի մարզի Հրազդան համայնքի թիվ 2 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի գազաֆիկացման համակարգի կառուցման աշխատանքներ»					1 106 580	1 106 580	1 106 580	1 106 580	1 106 580	1 106 580	1 106 580	1 106 580	1 106 580

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հրազդանի համայնքապետարան
ք.Հրազդան, Սահմանադրության
հրապարակ 1, վարչական շենք
Հրազդանի ՏԳԲ
ՀՎՀՀ 03027114
ՀՀ 900122001663
Համայնքի ղեկավար՝

Ս.Միքայելյան

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Դավարտ» ՍՊԸ
Գ.Գետարգել, Ս.Ալեքսանյան
փ,6տ
Ակբա Բանկ ՓԲԸ
ՀՀ 2204933320540000
ՀՎՀՀ 03542969

Ա.Գրիգորյան

ՍՏԱՑՈՂ

«Հրազդանի թիվ 2 ՆՈՒՀ» ՀՈԱԿ
Հասցե ք.Հրազդան Բանավան թաղամաս
Դուրյան 26
«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ
ՀՀ 163158017067

ՀՎՀՀ 03007849

Տնօրենի ժ/պ՝ Ս.Արշակյան